

« Աստուծոյ Հոգին, ասումէ մարգարէն, իմաստութեան ու հանճարի Հոգի է, իտեհրդի և զօրութեան Հոգի է, զնորութեան և աստուծոյ պաշտութեան Հոգի, Աստուծոյ երկնայի Հոգի » : Կայ արդեօք ձեր մէջ, եղբարք, գոնէ մէկն այդ ձիրքերից. եթէ ունինք, ուրեմն չդադարենք աճեցնելու Աստուծոյ ձիրքերը :

« Հոգոյ պարտաւոր, ասումէ Առաքեալն, է « երբ, ինքս-նի-նը, իսկապէս-նը, երկայնահոս-նը, քաղցր-նը, բար-նը, հաստ-արմ-նը, հեղ-նը և ծո-ծկալ-նը » : Կայ արդեօք մեր մէջ գոնէ մէկն այդ պատուիրներից. եթէ ունինք, ուրեմն չդադարենք աւելի և աւելի քաղմապատկել այդ պատուիր, աճեցնել աւելի և աւելի բարձր աստիճանի հասցնելով : Թէ տուրքն և թէ նորա պատուիր մեր մէջ բնակուող սուրբ Հոգւոյ յայտնի նշաններն են : Եւ թէ աւելի բան կայ ցանկանալու : Հաւատարիմ ու հնազանդ լինինք սուրբ Հոգւոյ առաջնորդութեամբն ու նորա տաճարները լինինք :

(Թարգմ. Ռուսերէնից) Կարապետ Տէր Յակովբեանց :

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀՆԵԽՕՍԵԿԱՆ ՏԵՂԵԳՐՈՒԹԻՒՆ

ՀԵՂԲԵՏԵՅ.

(Շրջանի. Աբաբա, Բ, Ե.) :

ՅՕԴՈՒԱԾ ԺԹ.

ՀՐԱՇԱԴՈՐԾ ԱԻԱԳ ՍՈՒՐԲ ՆՇԱՆՆ ՀԱՂԲԱՏԱՅ.

Մասն կենսատու խաչին Աւագ Սուրբ Նշանին Հաղբատայ է ի մասանց այնր խաչի, զոր սուրբ կոյսն Հռիփսիմէ երեք ի Հայաստան յաւուրս Տրդատայ թագաւորի մերոյ և վասն առժամանակ մնալոյ այնր խաչի ծածկեալ ի Վարազ լերին կոչեցաւ Վա-

քաղաք Խաչ 1) : Մասն այսր խաչի ի վաղուց անտի գտանէր ի տան Բագրատունի նախադատիւ նախարարաց մերոց, և ամենայն յարգանօք պահպանիւր ի մէջ նոցա իբրեւ պաշտպան Տանն Բագրատունեաց յորդուց յորդիս մինչեւ ցաւուրս Թագաւորութեան Բագրատունի Աշոտոյ Ողորմածի, որոյ բարեպաշտ Թագուհին Խոսրովանոյշ կառուցեալ զհրաշակերտ վանս Հաղբատայ ի 961 թուին ընծայեաց ապա զԲագրատունեաց հայրենական աւագ սուրբ Նշանն, զարդարեալն սակի և արծաթ պահարանօք վասն յիշատակի Տանն Բագրատունեաց և արեւշատութեան Թագաւորացն որդուց իւրոց Սմբատայ և Գուրգենայ ի պայծառութիւն նորաշէն հրաշալի տանն Աստուծոյ, ուստի էառ այս նորաշէն մենաստան նախ զանուանակոչութիւն Աւագ Կոնստանտին Նշանի Վանի Հաղբատայ և ապա Կոնստանտինի եկեղեցոյ : Այս Հռիփփոմեան — Բագրատունի սուրբ Նշանն է, որ մինչեւ ցարդ պահպանի ի Հաղբատ ամենայն զգուշութեամբ :

Ի մէջ ժի, դարուն տեսանեմք յարձանագիրս ընծայաբերութիւն այլ ևս մասանց սուրբ Նշանի, զոր ընծայեաց բարեպաշտն Խաթուն՝ դուստր Հասանայ յաղգէ Գէսուսեանց, տիկինն Զաքարիայ իշխանին Հաղբատայ, որ շինեաց զսուրբ Աստուածածին եկեղեցի, և ըստ արձանագրոյն « ետ ի սա զսուրբ Նշանն սակի, որ ունի մասունս : » Իսկ Տէր Յովհաննէս Արքեպիսկոպոսն Դուփեանց յիշատակէ զանուն միւս առանձին սուրբ Նշանի յասելն « ետու կազմել զմեծածախ պահարան Բրդաձորոյ 2) սուրբ Նշանին » : Թովմաս եպիսկոպոս ի տաղաչափութեան գրէ ի միջի այլոց զմասանց Հաղբատայ սուրբ Նշանացն :

« Նախ ի մասնէ կենաց Փայտին

Զկնի Ուրդաց սուրբ Նշանին

(1) Տես ի ճառս սուրբ Խաչին Զաքարիայ եպիսկոպոսի Բէհրուղեանց ի ձեռագիրս Գլ. ԼԲ. և ի հին պատմաբանական գրուածս Հաղբատայ վանից ի յիշատակարանի « Վարմիր կոչեցեալ Աւետարանին » :

(2) Թուի գոլ անուանեալն Որդայորոյ Կոնստանտին (ստորագ. հին Հայաստանի էջ 364.) բայց Յովհաննէս Արքեպիսկոպոսն Դուփեանց բացայայտ արձանագրէ « Բրդայորոյ Կոնստանտին Նշան » : Բրդաձոր գիւղն այժմ գտանի ի մերձակա վայրս Հաղբատայ, այլ ո՞ր է Որդաձորն, չգիտեմ :

Եւ Խարիթայն ընդ Կախմախու

ՅձաՀալած բարձօղ մահու:

Գռուղ 1) նշանն հրաշագործ

Աղթամարայն թշնամակործ . . .

Յիշատակեալքս գռուղնաքեայ

Են սրբութիւնքն Հաղբատայ:

Այլ ոյր ձեռն եհան ի մենաստանէս զվերջին յիշատակեալ
երկու սուրբ նշանս, չէ յայտ ումեր:

Սկսեալ ի 961 ամէ ց1600 թուականն Քրիստոսի բազմիցս
Բագրատունեան Աւագ սուրբ նշանն Հաղբատայ ընդ այլ մա-
սանց, եկեղեցական զարդուց և սպասուց յաւար մատնեցաւ
ի ձեռս այլազգեաց, և Բագրատունաշէն վանքն մնաց անբնակ
յարշաւանաց անողորմ թշնամեաց: Աւանդութեամբ եհաս առ
մեզ պատմութիւն, թէ Հաղբատայ սուրբ նշանն ի գերութիւն
մատնեցաւ ի ձեռս այլազգի զօրաց և տարեալ եղեւ ի Պարս-
կաստան. հուսկ ուրեմն հրաշագործութեամբ իւրով ազատե-
ցաւ ի գերութենէ այլազգեաց բերեալ եղեւ յԱղթամար ի
Սուրբ Խաչ անուանեալ եկեղեցին: Մերունազարդ Պետրոս
վարդապետն պատմեաց մեզ, թէ ի նախկին միաբանից տեղւոյս
լուեալ եմ, թէ սուրբ նշանն յետ դարձին ի գերութենէն յԱղ-
թամար ի սուրբ Խաչ վանքն, արար զբազում հրաշագործու-
թիւնս, բժշկեաց զախոս և զհիւանդութիւնս ի ժողովրդոց,
և անտի ի ձեռն բարեպաշտից վերադարձաւ ի նախկին իւր
յարբունաշէն վանս Հաղբատայ:

Յետ այսր հնոյ պատմաբանական աւանդութեանց եդից աս-
տանօր զվիպաստանական գրուածս ի վերջին թերթս ձեռագիր
Յայտմաւորքի. այսօրինակ: «Ի ժամանակս զօրանալոյ Յովմա-
նեան տէրութեան և տարածանելոյ զիշխանութիւնս ի վերայ
Վրաստանի և Հայաստանի կորզելով ի ձեռաց Պարսից զվերին
կողմանս Հայաստանի, Նահաբաս թագաւորն Պարսից գրգռեալ
ի փախուցելոցն Հայոց բազմաց և Վրաց ի ձեռաց Յովմանեան
բզեշխից, պատրաստեցաւ ի պատերազմն յանկարծ յարձակիլ

(1) Գուցէ հոգւոյ կամ հոգւոյ, զի առ Վարդանայ յիշատակի՝ Խաչ հո-
գւոյ ի ծառաբար:

ի վերայ քաղաքացն՝ որոց տիրեալ էին Սամանեանք ի սահմանս պետութեան Պարսից. գործաւարք սորա բռնադատեցին զբնակիչս ի Հայաստանէ գաղթիլ ի խորս Պարսկաստանի. Անխղճմտանք և անօրէն զօրք նորա սիրեալ ի Հայաստան քանդեցին զքաղաքս և զգիւղս, ամայի արարին զվանօրայս, յափշտակեցին զեկեղեցականն անօթս, տանջեալ չարչարեցին զմիաբանս, սպառնալով զմահ պատուհասի, վարեցին ի գերութիւն զՀայկազեանս: Եւ սմին դառն ժամանակի կրկին գերի անկաւ աւագ սուրբ Նշանն ի ձեռս Պարսից, ոմն ի միաբանից Հաղբատայ Յովհան վարդապետ՝ լուեալ զտեղի սուրբ Նշանին՝ ծպտեալ կերպիւ գէպ ուղիղ գնաց յԱսպաՀան քաղաք, հարցուփորձ լեալ իմացաւ, զի պարեպաշտօն անձինք Հայոց գնեալ են ի ձեռաց Պարսից զսուրբ Նշանն և պահպանեն ամենայն յարգանօք ի տան միում: Անդ բազում ամս կացեալ Յովհաննու վարդապետին ի սպաս սրբոյ Նշանին ցանկայր ի դիգող ժամու յետս դարձուցանել զայն ի Հաղբատ, բայց երկնչէր ի բռնակալացն Պարսից, զի մի վերստին անկցի ի ձեռս նոցա:

Յայս միտս հանապազորդ վարանեալ շրջէր տրտմութեամբ ծերունի վարդապետն, մինչև յաւուր միում ի տեսեան ազդեղև նմա թէ՛ «Արիացիր, զօրացիր, վարդապետ, առ զիս, և տար ի տեղի իմ, մի երկնչիր, ես ընդ քեզ եմ»: Յարուցեալ վարդապետին ի քնոյ պատրաստեաց զինքն, և առեալ զսուրբ Նշանն փախստական անկաւ ի սար և ի ձոր եկն եհաս ի սահմանս Գեղամայ ծովակին, ուր դադար կալեալ ի ստորոտս միոյ քարաբլրոյ պահեաց անդ թագուն ի քարանձաւին զսուրբ Նշանն և ինքն գնացեալ զօրէն աղքատի ժողովել զառօրեայ պաշարս վասն ճանապարհի: Նուտով անկաւ յուղի, եկն եհաս ի վանս Գանձասարու, և անդ բազմեցոյց առ ժամանակ զսուրբ Նշանն: Եւ իբրև խաղաղութիւն եղև կողմանցն Հաղբատայ ծերունի վարդապետն Յովհան վերստին առեալ զսուրբ Նշանն ի Գանձասարայ բերեալ հանգոյց ի վանս Հաղբատայ ի յիշատակ անմոռանալի անուան իւրոյ:

Յետ դարձի ի վերջին գերութենէն սուրբ Նշանն միշտ եղեալ է ի վանս Հաղբատայ մինչև ցայսօր: Թէպէտ ի ժամանակս պէսպէս փոփոխութեանց տեղափոխեալ են ի զանազան տեղիս պահպանութեան աղագաւ, բայց միաբանքն չեն ձեռաց

ի թող արարեալ զայն, այլ վերստին բերեալ պահեալ են աստ: Որպէս ի ժամանակս յարձակման Ազայ-Մահմատ-Խանի ի Վրաստան, հանեալ ի Հաղբատայ զսուրբ Նշանն հանդերձ վանական անօթիւք սարան յայլ ամուր տեղիս ի պահեստ. բայց եկաւորեալն ի Ռուսիոյ Յովսէփ Արքեպիսկոպոսն երկայնաբազուկ Արղուժեանց ի 1795 ամի բերել ետ վերստին ի Հաղբատ զսուրբ Նշանն, նորոգեաց զարծաթապատ ոսկեզօծ պահարան նորա, հրամայեաց այնուհետեւ ոչ ևս հանել ի վանաց աստի զսուրբ Խաչն տէրունական. այլ եթէ խռովութիւն ինչ ևս ծագեացի յերկրի մերում, կարեն ապաստան լինիլ յամուրս քարայրիցն Հաղբատայ և թագուն պահել ի քարանձաւս և ի ծերպս վիմաց:

Աստանօր եղից զարձանագրութիւն որ ի թիկունս պահարանին սրբոյ Նշանին: « Յետ աւերման աշխարհին Վրաց ի Պարսիկ Ազայ Մահմատ-խանէն ի թուին Հայոց ՌՄԽԳ. հրամանաւ Ռուսաց կայսերուհւոյն Եկատարինէի ընդ զօրացն նորին եկի ի հայրենի աշխարհն իմ սակս օգնութեան, և չոքայ ի յերկրպագութիւն վանօրէիցն մերոց Հաղբատու և Սանահնու՝ տեսի զամայութիւնս նոցա և (5) զյափշտակութիւն սուրբ Նշանին Հաղբատու. ուստի կազմեցի զպահարանս և եղի ի սմա զիմ ճշմարիտ մասն ի կենաց փայտէն և զայլ մասունս սրբոց, և ընծայեցի Հաղբատու սուրբ Նշան վանից յիշատակ ինձ յեւից աստի և նախնւոյն իմոյ Զաքարիա Ամիր Սպասալարին Հայոց և Վրաց նաև ծնողացն իմոց Նիօշ Բէգին և պատրոն Քէթեանին և իշխանազնեայ եղբարցն իմոց Մովսիսին, Բէժանին, Փարսադանին և բարեշառաւիղ որդւոց և զստերաց նոցին: Իսկ որք կարգայք յիշեցէք յաղօթս զՍանահնեցի երկայնաբազուկ Արղուժեանց Յովսէփ Արքեպիսկոպոս՝ առաջնորդ Ռուսաց երկրի ամենայն Հայոց աղգին. հիմնադիր երկուց քաղաքացն Նոր — Նախիջևանի և Գրիգորիպօլու յամի Տեառն 1797-ն և թուին Հայոց ՌՄԽԶ. ի Մոսկով ձեռամբ Դաւթի Ծատուրեանի »:

Յօրէ աստի խաղաղութիւնն թագաւորեալ ի վերին կողմանս Հայաստանի օրհնաբանեալ կայսերութեամբ Ռուսաց կայ և մնայ Աւագ սուրբ Նշանն ի վանս մեր: Աքանչելի հրաշագործութիւն սորա հրաշափառ տարածեալ է ընդ ամենայն տեղիս:

ուստի ի բազում կողմանց Սոմխէթի հանապաղ յաճախեն ի վանս մեր ուխտաւորք, և գտանեն հաւատով զցանկալի փրկութիւն: Իսկ յերեւիլ երբեմն դաժան ցաւոց և ախտից բնակիչք գիւղօրէ յիցն Ղաղախու, Բօրչալուի Շամշադինոյ, Լօււոյ նա մանաւանդ Տփխիսեցիք բազմութեամբ գիմեն ի սուրբ Նշանա, և ուղիղ հաւատով ապաւինեալ ի սքանչելագործ զօրութիւն նորա տանին մեծաւ փառօք յերկիրս իւրեանց ի փարատումն երեւեալ ցաւոյն:

Զկատարումն խնդրուածոց իւրեանց թող նոքա պատմեցեն, որք յայտնապէս տեսին զհրաշագործութիւնս սորա ի ներկայ դարուս յաւուրս երեւման խօլերայ առաջին մաղձացաւոյն 1830, 1847 և 1857, ժանտախտին 1841 և մորեխին 1846 ամի ի գաւառս Տփխիսոյ:

ՔՕԴՈՒԱԾ Ի.

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԹԷՄԻՆ ԵՒ ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆ ՎԱՆԻՑ
ՀԱՂԲԱՏԱՅ.

Զառաջին տեղի հաստատողացն թեմի սորա ունին Աշոտ թագաւոր ողորմածն կոչեցեալ և բարեպաշտուհի կին սորա թագուհին Խոսրովանոյշ, որք զկնի շինութեան վանացս կարգեցին զանապատական միաբանութիւն կուսակրօնից ի տանն Աստուծոյ ընդ վանահայրութեամբ ճգնաղգեաց ծառային Աստուծոյ հայր Սիմէոնի. որպէս գրէ Ասողիկ « յաւուրս Հայրութեան սորա թիւ միաբան կրօնաւորելոցն ի Հաղբատ հասանէր մինչև ցհինգ հարիւր անձինս, և հաստատեցին ի սնունդ միաբանից առանձին վիճակ, նուիրեցին գիւղս և զագարակս: Ի թուին Հայոց ՆԺԶ (967): Եւ ապա հետզհետէ բազումք յաւագ իշխանաց Հայոց օրինակի նոցին հետեւեցան: Միթփասան որդի Աբասայ արքային և ամուսինն նորա Թուսուգան թ. ՆԽԵ (996) նուիրեցին սուրբ Նշանին զԱնագէթն Մամխուտն, Բագէնքն, Բերդկայ այգին, զտունն ձորթուլանց և Աւէտն: Ի թուին ՆՀ (1001) Ապլղարեայ որդի Գրիգորի իշխանի ընծայեաց զԱրծուէբոյնն: Ի թուին ՆԿԵ (1016) Մուկն իշխանաց իշխան որդի Հոնաւորայ ընծայեաց սուրբ Նշանին զիւր գանձագին ագարակն, և այլք բազումք որպէս երեւին յարձանագրութեանց:

Յերկոտասաներորդ դարուն յետ բաժանմանն՝ զոր արար Դաւիթ կաթողիկոս Աղթամարայ, նոր կանոն սահմանեցին:— զի առանց հաւանութեան եպիսկոպոսացն Բջնոյ, Հաղբատայ, Տաթևու և Արտազու վանաց ոչ նստցի կաթողիկոս Հայոց: Այս արտօնութիւն շարունակ տեւեաց մինչև ցվերջ 18 դարուն:

Ի 1210 թուականին Մանգատուրթ ուխուցէս Ամիր սպասաւար Նահնշահ Զաքարիա որդի իշխանաց իշխանին Սարգսի ետ ի սուրբ ուխտն Հաղբատայ զգնեալն ի Դաւթայ որդւոյ Շոթորկայ իւր երկու գիւղին փոխան զՀաղբատ՝ հայրենիք և ընծայ սուրբ Նշանին ամենայն բնական սահմանօք որպէս յառաջն եղեալ է: Եւ ազատ արար այս գիւղ յամենայն հարկէ ի պարոնաց ի ծռնաւորաց և ի գիւղապետաց: Եթէ հակառակի ոք և զյիշատակս նորա խափանել ջանայ, յիւրոց կամ յօտարաց մեծ կամ փոքր Վրաց կամ Հայոց ի Լօռէ տերանց, յեպիսկոպոսաց, ի քահանայից կամ յաշխարհականաց արանց զՀաղբատըս յետ առնու՝ նզովի յամենակալ բարերարէն Աստուծոյ: Թ. ՈՅԹ:

Որդի սորա Մխարգրձէլ և ամուսինն նորա Աննա ետուն ՌՇ. (1500) սպիտակ մոմագին սուրբ Նշանին: Վաչէ իշխան թոռն Վաչուկ իշխանին ընծայեաց սուրբ Նշանին զձիթահանքն: Նաշմագին իշխան թոռն Քուրդ—Ուքանայ շնորհեաց զՅովի, զԱրևունքն և զԿեչլենուտի սյգին, թ. ՈԿ. (1211): Մարիամ դուստր Կիւրիկէ արքայի և քոյր նորա Ռուսուդան նուիրեցին զԱյգեհատն 36 տուն ճորտ շինականաւ, թ. ՈՀԵ. (1226): Դաւիթ իշխան վերստին հաստատեաց զնուիրածսն յիւր պապ Քուրդ—Ուքանայ և ի հօր իւրոյ, ՈՂԲ. (1243): Հայր Յովհաննէսն ետ զՋոջկան գիւղն սուրբ Նշանին, թ. ՈՂԴ. (1245): Գրիգոր իշխան և ամուսինն նորա Մամբան ետուն զԱգուաւաձորն ի սուրբ Նշանն: Զայլոց նուիրատուաց զանուանս մարթ է տեսանել ընդարձակօրէն յարձանագրութիւնս վանից Հաղբատայ:

Զանուանս քանի մի վանահարց, առաջնորդաց և պաշտօնակատար վարդապետաց վանից Հաղբատայ աստանօր դիցուք կարգաւ:

Ի թիին Հայոց ՆԺԶ (967) առաջին վանահայր կարգեցաւ Սիմէոն ճգնաղգեաց ծառայն Քրիստոսի, ի Խոսրովանոյշ թագուհւոյ, Ի 991 (ՆԽ). Տիրանուն երէց վանահայր:

Սարգիս արքեպիսկոպոս նախկին առաջնորդ յարքեպիսկոպոսանիստ աթոռն Հաղբատայ, ստացեալ զարտօնութիւն և զառանձին փիճակս, հաստատեալս յարքայից Հայոց, Վրաց և Աղուանից ի 1063:

Տէր Սարգիս Բ. արքեպիսկոպոս ի 1086. թ.

Տէր Յովսէփ արքեպիսկոպոս ի ժամանակս թագաւորութեան Դաւթի: 1006 թվին:

Բարսեղ արքեպիսկոպոս Հաղբատայ մեծապէս պատուեալ ի թագաւհւոյն Վրաց Թամարայ. զի եղբարք նորա գործակալք էին յարքունի տանն Վրաց:

Գէորգ արքեպիսկոպոս, ընդ որում թղթակցի ստէպ ներսէս Շնորհալին, և ստանայ ի սմանէ զպատասխանիս թղթոցն լի հաւատաճառ բանիւք:

Տէր Գրիգորէս արքեպիսկոպոս (Տուտէորդի) ազգական իշխանացն Զաքարէի և Իվանէի, տեղեակ եկեղեցական և արտաքին գիտութեանց յաւուրս Գրիգոր կաթողիկոսի Տղայ մականուանելոյ, բազմիցս զգէմ կալաւ արեւմտեան վարդապետաց, որք կամէին մուծանել զնորաձեւութիւնս յեկեղեցիս մեր. ուստի խորհրդակցութեամբ բանիբուն վարդապետաց գրեաց թուղթ ընդգէմ հրաւիրանաց Գրիգորի կաթողիկոսի, որ վասն միաբանելոյ զեկեղեցիս մեր ընդ Յունաց, և փոփոխելոյ զքանի մի ծէսս: Սա հաւատաճառ և ազգու գրութեամբն եղև ատելի յաչս բազմաց. ուստի ազգմամբ թշնամեաց իւրոց, գտելոց ի ժողովսն Լօռւոյ հարկագրեցաւ թողուլ զաթոռ արքեպիսկոպոսութեան Հաղբատայ, ազատել զանձն իւր փախըստեամբ ի ձեռաց մեծի իշխանին Զաքարիա Ամիր—Սպասաւարի: Ափսոս, հաւատաճառ գրուածք Տուտէորդւոյն չերևեցան մինչև ցարդ:

Յովհաննէս սարկաւազ վարդապետ և վարժապետ բազմաց, գրեաց զՂևոնդեաց քահանայից շարականն « Պայծառացան պսօր, զյիշէմ Կէրն, և պէսպէս ճառս ներբողականս և զպատմութիւն ինչ Հայոց ընտիր ոճիւ »: Մեռաւ ի 1109 թ. կամ 1128 թ.

Դաւիթ Քոբայրեցի բանիբուն վարդապետ և հաւատաճառ:

Յովհաննէս Ա. արքեպիսկոպոս քուերորդի իշխանացն Զաքարէի և Իվանէի, շինող բերդին Ապսոնոյ, կանգնող Աստուա-

ծընկալ Ա.Ֆ.Ն. Բ. Խաչին, և արեւելեան գաւթին Հաղբատայ, Յամին 1233:

Յովհաննէս Բ. արքեպիսկոպոս ազգական իշխանացն Խաչե-
նւոյ յետ փախստեան Տուաէորդւոյն հրամանաւ Զաքարիա
սպասալարի եկաց եպիսկոպոս Հաղբատայ, գտաւ ի 1196 և
և ի 1205 թուականին ի ժողովոյն Լօււոյ, ընդ այլոց գերիմաստ
վարդապետաց, և եղև առաջինն ի նոցունց, որ ընծայեաց
զհաւանութիւն յառաջագրեալ խորհրդոյ Լօււոյ ժողովոյն:

Յովհաննէս Գ. որդի Աղուարթանայ ի Մաճնաբերդէ յազգէ
Բագրատունեաց ամս երկու. որ չև էր ձեռնագրեալ եպիսկո-
պոս վասն շփոթման ժամանակին և ապա ձեռնագրեցաւ ի Ներ-
սէս կաթողիկոսէն յաթոռ արքեպիսկոպոսութեան Հաղբատայ:

Համազասպ արքեպիսկոպոս ի քաղաքէն Անւոյ, շինող ի 1245
թ. սքանչելակերտ զանգակատան, և ի 1257 թ. հրաշալի ժա-
մատան յիւր անուն Համազասպ կոչեցելոյ:

Յովհաննէս Դ. արքեպիսկոպոս ի Ժ.Գ. գարուն ի ժամանակս
Ուրպելեան Ստեփաննոսի նստաւ յաթոռ արքեպիսկոպոսու-
թեան Հաղբատայ:

Յովհաննէս վարդապետ Երզնկացի, Ծործորեցի, Պլուզ կո-
չեցեալ՝ նստեալ ի Հաղբատ արար գիրս ի վերայ երկնային շարժ-
մանց, ասաց զշարականն Լուսաւորչի, « Այսօր զուարճուցեալ », և
« Լերինք առնայն », « Որ զլոյսն անճառ », Մեծին Ներսիսի, և
եօթն խոտաճարակացն՝ « Յառաջս վերջն ժամանակի », նոյնպէս
զանազան երգս որպէս Զրօրհնեացն՝ « Յառնայն ժամ օրհնէ՛ք », և
« Այսօր յայնն հայրական », լրացոյց ի Շնորհալուոյ կիսակա-
տար թողեալ Դէնո-Բէնն Մատթէոսի Աւետարանին: Ի թվին Հա-
յոց ԶԽ. (1491) էր առաջնորդ Հաղբատայ Պետրոս եպիսկոպոսն
և ապա հետ զհետէ բազում արքեպիսկոպոսունք, յորոց միջի
երեւելի գտան գործովք և բարեկարգութեամբ ըստ արձանա-
գրութեանցն Գէորգ եպիսկոպոս, Յակօբ, Վարդան մեկնիչն
քաջաբան, Ռուսինոսն անմարմնական: Բարսեղ և Գրիգոր ե-
պիսկոպոսունք և այլք:

Ղուկաս կուսակիւրօն վարդապետ ի թուին Հայոց Ռ. (1551):

Կիրակոս եպիսկոպոս Հաղբատայ ի 1629 թ. ՌՀԸ:

Բարսեղ արքեպիսկոպոս յազգէն կնեազ Թումանեանց 1668 թ.

Աւետիս արքեպիսկոպոս նորոգող կաթողիկէի և պարսպի
վանիցն 1677 թ.

Արրահամ արքեպիսկոպոս յաւուրս Հերակլ արքայի Վրաց
ժարդարնակ արար զգիւղն Հաղբատ և պայծառացոյց զվանքն
1776 թ.

Դաւիթ արքեպիսկոպոս Խէրովինեանց վիճակաւոր առաջնորդ
վանիցն Հաղբատայ և Վրաստանի նստեալ ի Տփիսիս ի կաթու-
ղիկէ բերդի եկեղեցւոջ վախճանեցաւ ի 1797 թ.

Սարգիս արքեպիսկոպոս առաջնորդ Կախէթի, Քարթլի և
Վրաստանի վիճակային ժողովրդականացն Հաղբատայ ի թվին
ԽՄԽԹ. (1800):

Մերուհի Զաքարիա ծայրագոյն վարդապետ Տփիսիսեցի 1810
թ. Հուսկ ամենայնի Զաքարիա արքեպիսկոպոս Գուլաստեան
Բէհրուդեանց առաջնորդ Հաղբատայ և վիճակի նորա, այր
քաջակիրթ և ուսումնասէր գրեաց զքարոզգիրս, Վէպ Սեւա-
նայ, գովեստ ի սուրբ և ի միշտ կոյսն Աստուածածին, և ի
սուրբ խաչն, և զերգարան վայելչաճիւս. բոլորն ինքնաձեռա-
գիրք: Զկնի մահուան սորա առաջնորդական և արքեպիսկո-
պոսանիստ աթոռն Հաղբատայ փոխեցաւ ի 1836 ամի ի վանա-
հայրութին, ըստ նոր կարգադրութեան:

ՎԱՆԱՀԱՐԲ Ի 1836 ԱՄԷ.

Յետ վերջին առաջնորդին Հաղբատայ առաջին վանահայր
կարգեցաւ Եփրեմ ծայրագոյն վարդապետն Երզնկեանց, որ ի
պայծառութեան պահեաց զվանքն: 2. Պետրոս ծայրագոյն
վարդապետ Շինօղեցի. 3. Աստուածատուր վարդապետ Շինօ-
ղեցի. 4) Յարութիւն վարդապետ Վահրամեանց Յձնեցի.
5) Մովսէս վարդապետ Մաղաքեանց և ապա եպիսկոպոս.
6) Թադէոս կուսակրօն վարդապետ Յակոբեանց Ախալցխեցի,
որ պայծառացոյց զվանքն նորանոր շինութեամբ և եկեղեցա-
կան զգեստիւք: 7) Զեռնասուհ աշակերտ նորա Յովհաննէս
քահանայ Երզնկեանց Հաղբատեցի. 8) Առաքել վարդապետ
Քարուանսրեցի. 9) Յովսէփ վարդապետ Խարազեանց Տփիսիսեցի
շինօղն նոր առաջնորդական սենեկացն, հաստատողն վանական
դպրոցի, և հարթողն խրամաձորեան ճանապարհի մինչև
ցկամրջատեղին Դէբէդայ գետոյն. 10) Սերովբէ եպիսկոպոս
Արարատեան, հիմնարկողն քարեայ կամրջի ի վերայ Դէբէդայ
գետոյն ի 1873 ամին:

ՅՈՊՈՒԱԾ ԻՆՍՏԻԹՈՒՏ

ՔԱՐԱՅԻՔ ՀԱՂԲԱՏԱՅ:

Որպէս ի Հաղբատաձոր նոյնպէս ի Նեղոց ի Խանջակ և ի Գլիզնաձոր կան ի քարանձաւս, ի լանջս և ի ծերպս վիմաց քանի մի երևելի քարայրք, որք երախտաւոր գտան ժողովրդեանն անվնաս պահելով զապաւինեալս ի նոսա յաւուրս արշաւանաց թշնամեացն: Որք են:

1.) Խաճաճի քարայրն գտանի յարևելս ի քարալանջին, զմուտս որոյ պատեալ են կրազանգ որմովք վասն ամրութեան:

2.) Փոքր ինչ հեռի ի սմանէ ի հիւսիսակողմն ի ստորոտս քարափին Զրոյ — էրն՝ (այրն) զանուն իւր առեալ ի ջրոց անտի, որ յորդառատ իմն բղխի յայտմ՝ այրի:

3.) Ի վեր քան զայս Զրոցէրն կառուցեալ կայ ամրապինդ քարուկրեայ որմովք ի լանջս ահռելի քարափին Պնդոյն, որ հեշտ կարէ պարունակել յինքեան զ300 անձինս: Տեսանի աստ ի վերայ անշարժ սալաքար վիմի ներքնաքարն երկանի, իսկ վերնաքարն անհետացեալ է: Գոյ աստ քարեայ հացթուխ (ակութ), որով եփեալ են զհաց բերդականքն, առնլով զջուր ըմպելոյ ի մօտակայ Զրոցերէն անվտանգ:

4.) ՅԱրևմտից հիւսիսոյ հանդէպ Նարապետաձորի Կախանայէրն դժուարագնալի, ի ներքոյ քարագլխոյն Քարհողերի, նոյնպէս պատեալ քարուկրեայ որմովք, գոյ աստ կիրճ ինչ ելից յայրէ աստի ի քարագլուխն Հաղբատայ տափին, ի ներքոյ այրիս բղխի աղբիւր ականակիտ ի պէտս ապաստանելոց յամուրս յայս:

5.) Ի թիւս փոքրիկ քարայրից հաշուին Զրախրաճն, Հաղբատաճորն Կախայրն, և Քալալարն, Դաւառն էրն, Քախայրն Դաւալանքն, որք կալեալ ունին զտեղի մարտկոցաց կամ գղեկաց:

6.) Հանդէպ Հաղբատայ դէպ ի հարաւ ի սիրտ քարափին Մտիչանց ձորի է քարայրն մեծ, որ ունի զկիսաքանդ որմն հանդերձ փոքրիկ դրամք և զկաթիլս ջրոյ: Մերձ սորա երևի Ծախախան ուրանօր թագուցեալ են զպահուստս և զկայս իւրեանց յաւուրս խռովութեանց երկրին:

7.) Յանդիման Հաղբատայ յարևմուտս հարաւոյ տեսանի Լաւառն էրն ի բարձր քարալանջս սեպացեալ քարագլխոյն Որնա-

կայ: Եւ և էջք սոյն քարայրի ահաւելի և զժուարին են յոյժ: մինչև ցկէս ուղին զիարդ և իցէ մարթ է գնալ քարալարիւն կամ ի ներքուստ. բայց ի կէս ճանապարհէ անտի դողդոջուն լաստիւ ելանեն ի քարայրն. ի հայելն իմ ես հիացեալ ափշեցայ: Թէ որպիսի խոհուն հնարագործութեամբ ծակեալ զլաջս քարափին ամրացուցեալ են զերկաթեայ ցլցս: յորոյ վերայ արկեալ լաստս շինեալ են զուղի երթեկութեան, գոգցես 100 սափէն բարձրութեամբ:

Հարկ զօրէնս լուծանէ. բարբարոսն ստիպեաց որոնել զտեղի թագստեան: հարկն վրդովեալ ժամանակին բռնադատեաց զբնակիչս ծննդական երկրին իմոյ շինել ի ծերպս: ի փապարս և յահաւելի քարալանջս զայսօրինակ ապաստանարանս յաղագս ապաւինելոյ ի նոսա յաւուրս արշաւանաց գունդագունդ թշնամեաց ի միջին դարու: և ապա անդադար հինից Լեկզեաց, որք խմբովին ի սփիւռ տարածեալ յայսմ երկրի յափշտակեալ են և ի գերութիւն վարեալ զբնակիչս Զորագետոյն: Ի ժամանակէ աստի մնացեալ է մինչև ցարդ սովորական անէծքն, զորս կանայք ի քարկանալն իւրեանց ասեն միմեանց թէ՝ «Մաղանդարան Գէշի Գնա», հարս՝ Իսկանդերի լեկզին +եղ Կանի»: Յասացուածոց աստի երեւի թէ պարսիկք, Հագարացիք նմանապէս և ապա Լեկզիք յիւրում ժամանակի արարեալ են աստանօր զբազում սրածութիւնս և զգերութիւնս:

Պատմեն թէ, Զարեհ պայազատ իշխանն Հաղբատայ՝ թոռն Բաղուց թագաւորի ունելով ինչս բազումս ի նախնեաց և գուլով տէր բազում գիւղօրէից և գաւառաց էառ ի կնութիւն իւր զԳոհարվարդն, զգուստրն հարուստ պայազատ իշխանի Հայոց, և օր ըստ օրէ յաւելեալ ի փարթամութիւն եղև սիրելի յաչս արքայից, արքայազանց և ազատ իշխանաց, տուեալ զՄամբան քոյր իւր ի կնութիւն Զալալ իշխանին Նաչենեցւոյ առաւելան փառք և պատիւ նորա առաջի ամենեցուն: Հուսկ ապա զհետ եղև մեծագործութեանց և ազգօգուտ յայնմ ժամանակի շինուածոց, յորոց երկուքն այժմ և եթ տեսանին:

8) Առաջինն է Զարեհ այլն (որ այժմ կոչի Զառնի էր) յարեմուտս Հաղբատայ ի Նրէկաձորին յանդ իման Աայան բերդի ի ստորոտս միապաղաղ քարափին կառուցեալ ի պէտս ժողովրդոց քարուկրեայ որմովք, ստուար և անսանալելի բրգօք

և աշտարակօք. որ և է անառիկ և մեծանիստ ապաստանարան, յորում բղխի հանապազ ի վիմէն սուղ ինչ ջուր ի սէտս ապաստան եղելոցն ի սա: Իսկ միւսն կոչի Պարնի էր վասն գերդաստանի իւրոյ այնպէս անառիկ ի պարեխ վիմաց, յորում գտանի առանձին քարուկրեայ շինուած վասն տաճարանելոյ զջուր: Ի վեր քան ղերկոսին պարսպակապ քարայրս գտանի ի պարեխ միապաղաղ վիմացն դժուարագնալի Յակայր որ եղեալ է պահարան կայից և ընչից բազմականաց, նոյնպէս անօթոց և բազմաթիւ մատենից վանացն Հաղբատայ: Վախուշտ արքայորդին Վրաց յաշխարհագրութեան երկրին Վրաց գրէ վասն կողմանց Գուգարաց, որք ուռգանին ջրով Գէրէդայ գետոյն, և յաղագս մենաստանացն Հաղբատայ և Սանահնի ասէ. ի վեր քան զմենաստանն Գորայրւոյ գտանի և Զէլի — Տշարիսի աւագ սուրբ Նշանի վանքն Հաղբատայ. անդ ի բարձրագոյն քարափս վիմաց գտանին բազմաթիւ քարայրք, յորս պահպանին յոլով հին ձեռագիր մատեանք, բայց ոչ կարելով ումեք զայնս ի ձեռս բերել՝ մնան անմերձենալի և անօգուտ իսկ: « Վախուշտ № 141: Ի Յակ քարէ աստի Պ. Երիցեանցն ի 1873 ամի եհան բազում մատեանս, որք բոլորովին անպիտանացեալ էին և իսպառ քարացեալք ի խոնաւութենէ անձրեւաջրոց: Վերոյիշեալ երկոքին պարսպակապ քարայրքն և յաւուրս իմ երախտաւոր գտան անվնաս պահպանելով զքնակիչս Հաղբատայ և միւս գիւղօրէիցն ի ժամանակս վերջին պատերազմին Ռուսաց ընդ Պարսից ի 1827 ամի: Սակայն երկրաշարժութիւնն (1827) փոքր ինչ վնաս ետ ամրոցաշէն պարսպացն քանդելով միմիայն զվերին քարեայ ծածկս:

ՅՕՒՈՒԱՅ ԻՔ.

(Ա. — Կ. — Բ. — Զ.) .

1.) ՄԱՀ ԶԱՐԵՀ ՊԱՅԱԶԱՏ ԻՇԽԱՆԻՆ ՀԱՂԲԱՏԱՅ.

Յաւուրս թագաւորութեան Աշոտոյ արքայի Ողորմածի Զաւալ իշխանն Խաչենոյ ապստամբեցաւ. զորս օգնականութեան ստացեալ յոստիկանէն Հագորացոց Յուսուփայ յարուցանէր զմեծ խռովութիւնս ի Հայաստանի: Աշոտ թագաւոր առաքեաց զեղբօր որդին իւր զԳուրգէն խաղաղացացուցանել և հնազանդեցուցանել զԶաւալ իշխանն — Գոլ առանց արիւնհեղութեանց:

Յաւուրս յայսոսիկ ամուսին Ջալալ իշխանին Մամբան՝ քոյր Ջարեհ իշխանին Հաղբատայ՝ թոռին Բաղուց թագաւորի հիւանդացեալ էր, այսու պատճառաւ եղբայր նորա Ջարեհ գնաց ի տեսութիւն քեռն իւրոյ ի Խաչէն, և յորժամ Գուրգէն եմուտ յերկիրն Խաչենոյ Ջարեհ մնաց արգելեալ առ քոյրն իւր: Յետ գնալոյ Ջալալ իշխանի ի քաղաքն Անի առ Աշոտ թագաւոր, Գուրգէն խրոխտալով եմուտ ի բերդն Խաչէն, և կալեալ զբազում Խաչենեցի իշխանս ընդ որս և զՋարեհ եղ ի բանտի: Տեսեալ Ջարեհի թէ ինքն ևս առանց մեղանաց անշուշտ պիտի մահանձին ստանալ, վասնորոյ միջնորդ առաքեալ առ Գուրգէն յայտնեաց — թէ ես ոչ թշնամութեամբ եկեալ եմ ի Խաչէն, այլ ի պատճառս հիւանդութեան քեռն իմոյ Մամբանայ եկի յայս երկիր:

Պատասխանի ետ Գուրգէն, թէ գիտեմ ես զանմեղութիւն Ջարեհի, և ազատեցից զնա, եթէ տացէ ինձ զպատուական մարգարիտ օժիտն կնոջ իւրոյ: Չայս լուեալ Ջարեհի արձանացաւ, և տրտմութիւնն բոլորովին գրաւեաց զոսկերս նորա. զի այս աննման հաղուագիւտ մարգարիտ մնացեալ էր ի նախնեաց իւրոց ժառանգութիւն Գոհարվարդի կնոջ Ջարեհ իշխանին, և չէր կարելի Գոհարվարդին յանձն առնուլ տալ զայն պատուական մարգարիտ ի ձեռս այլոց:

Ջարեհ երկուցեալ ի մահուանէ առաքեաց նամակ առ կին իւր ի Հաղբատ՝ փութանակի գալ և բերել ընդ իւր զայն մարգարիտ: — Իբրեւ լուաւ Գոհարվարդն թէ սիրելի ամուսին իւր բանտարկեալ է, և վասն ազատութեան նորա պահանջէ Գուրգէն զանգիւտ մարգարիտն, շատ նեղացաւ. բայց երբ ի միտ երեր, զի եթէ խնայեսցէ զայն մարգարիտ, անշուշտ ամուսին իւր պիտի անկանիլ ի վտանգս փորձութեան, վասն որոյ առեալ զմարգարիտն՝ ել ի Հաղբատայ և փութացաւ ի Խաչէն: Նախ գնաց նա ի բանտն. ետես, զի Ջարեհն իւր կայ ի մեծի վտանգի ի թիւս ապստամբ իշխանաց, մխիթարեաց զնա, և խոստացաւ տալ զմարգարիտն ի փրկութիւն նորա: Գնաց ապա առ Գուրգէն՝ անկեալ յոտս նորա արտասուալից աչօք ինդրեաց զազատութիւն առն իւրոյ:

Գուրգէն յայտնապէս ասաց, Տիկին, եթէ ոչ տացես ինձ զմարգարիտն, չիք փրկութիւն առն քո:

Պատասխանի ետ Գոհարվարդն. — Իսկ եթէ տաց զմարգարիտն, ազատեցնէս արգեօք զԶարեհն իմ:

Երդնում ես յարեն Աշոտ թագաւորին՝ ասաց Գուրգէն, և զանուն նորա վկայ կոչեմ, զի իսկոյն ազատերից զայրն քո:

— Խղճալի Գոհարվարդն եհան զայն հաղուագիւտ ակն ի ծոցոյ իւրմէ, թացեալ զայն արտասուօք՝ ետ Գուրգէնին, որ բարբարոսական իմն յանդգնութեամբ էառ զակն պատուական և ասաց « Ե՛րթ Տիկին, այժմ հան զամուսինդ ի բանտէ: »

Իբրեւ լուաւ Գոհարվարդն զհրաման ազատութեան առն իւրոյ՝ մոռացաւ զանմոռանալի կռիւծն անգին մարգարտի, զի յոյս ունէր առաւել քան զայն գտանել զմարգարիտ. սլացաւ վազեաց դէպ ի բանտն, ոչ հաւատայր՝ թէ կարէ արգեօք տեսանել զազատութիւն սիրելի ամուսնոյ իւրոյ: Բանտապետն իսկոյն եբաց զգրուես. Գոհարվարդն եմուտ ի բանտ:

— Աստուած ամենակալ, զինչ էր, զոր ետես նա:

— Զարեհն անկեալ ի գետին գլխահատ, դեռ ևս բաց աչօք թաւալիւր ի ճապաղիս անմեղ արեան իւրոյ:

Գոհարվարդն տեսեալ զայս սոսկալի տեսարան ոչ ճշաց, ոչ ելաց, ոչ անկաւ ի վերայ մարմնոյ կենակցի իւրոյ և ոչ ևս արտասուեաց. այլ արձանացաւ ժամ մի և ապա ել անտի իսկոյն նստաւ ի կառս իւր, որով եկեալն էր. ել արտաքս ի բերդէն և ուղղակի գնաց յԱնի քաղաք: Արքայն Աշոտ քաջ ճանաչէր զԶարեհ իշխան և բազմիցս տեսեալ էր զԳոհարվարդն: Յորժամ այլագուցեալն Գոհարվարդ ներկայացաւ. Աշոտ թագաւոր իսկոյն ծանեաւ զնա. եհարց, զի՞նչ է պատճառ գալստեան նորա, և զի՞նչ համբաւս ունի: Գոհարվարդն պատմեաց ծայրէ ի ծայր մանրամասնաբար: Իբրեւ լուաւ արքայն զայս ազետալի անցս, մնաց շուարեալ. վերջապէս ասաց՝ Տիկին, նիստ ի տան իմում առ ընթեր կնոջ իմոյ մինչև կատարեցից զիմացածս իմ: Գոհարվարդն գնաց առ թագուհին և կայր ընդ նմա պատուով: Ծառայք նորա գնացին ի Հաղբատ և բերին յԱնի քաղաք զմիակ դուստրն Գոհարվարդի Նօնօֆար անուն որ էր ամաց երից. նման մօրն գեղեցիկ և ճարտար: Թագաւորն և թագուհին պարտ յանձին կալան մխիթարել զայս ողորմելի այրիս և խնամ տանել խղճալի որբոյն. ընդ նմին և տեսանել զիրաւունս նորա արդար դատաստանաւ: